

կաշահոս ջրերով եւ հրաշագեղ կանանցով, վառ երեւակայութեան արդիւնք էր, որով կ'ապրին արեւելեան ազգեր. նորա ազգեցութիւնն նկատելի է գրեթէ ամբողջ արաբական գրականութեան մէջ: Արօնական պատերազմները նորնիւթ տւին ժողովրդի լարւած հետաքրքրութեանն, բայց աւանդման պայմանները եւ եղանակը մնացին նոյնը. սրճարանը արեւելքում մինչեւ օրս կը ծառայէ ժողովրդի սիրած տեղը, ուր ամէն մէկը դէպք ունի՝ չէ--իւ եւ սուրճը առաջը դրած՝ հեքեաթներով, երգերով եւ առածներով զուարճանալու. պատմական աւանդութիւնն այժմ էլ կ'ապրի ծերունիների յիշողութեան մէջ, մինչդեռ երգը եւ հեքեաթը տեղէ տեղ շրջող աշուղների մասնաւոր արհեստն է: Հարկաւ այս ժողովարաններում մեծացած պատմագիրը հնուց անցքերի համար պէտք է օգտուէր ք--որ զրոյցներից, առանց հոգ տանելու նոցա արժանաւորութեան մասին:

Ահա թէ ինչու արաբական մատենագրերը սովորաբար բաց են անում պատմութեան թելը, նախմտաւ մի թւելով իրանց աղբիւրները («խնագ»)՝ «ինձ պատմել է --ը, որ լսած է ք--ից, որ լսած է է--ից...» եւ այլն մինչեւ առաջին զրուցողը, որից նոքա երբեմն դարերով են բաժանւած. բարեխղճօրէն առաջ կը բերեն նաեւ զանազան, անգամ միմեանց հակասող վկայութիւններ, չմոռանալով յայտնել եւ իրանց անձնական կարծիքը, յօգուտ եւ հակառակ նոցա. անգամ Տաբարին, Թ. դարի հռչակաւոր պատմագիրը, իւր բազմահատոր ժամանակագրութեան նիւթը նոյն բանաւոր աղբիւրից է քաղած: Այսպիսի խախուտ հիմքի վերայ հաստատւած աւանդութիւնն հարկաւ ժամանակի ընթացքում պէտք է առասպելանար, աշխարհագրական եւ դործող անձանց անուններն փոխադարձաբար շփոթւէին կամ բնաւ անհետանային. այսպիսի աղաւաղման օրինակ կը ներկայացրնէ